ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--» նոյեմբերի 2014**թ.** **N –Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՇԻՄՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄՄԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ՔՈՒՅՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Հաստատել «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի և Հորդանանի Հաշիմյան թագավորության Ամման քաղաքի միջև քույր քաղաքների» համաձայնագիրը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՇԻՄՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄՄԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ՔՈՒՅՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ելնելով Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի և Հորդանանի Հաշիմյան թագավորության Ամման քաղաքի միջև երկկողմ համագործակցության հաստատման անհրաժեշտությունից և նպատակ ունենալով զարգացնել երկկողմ կապերը, մի շարք ոլորտներում համագործակցության ծավալումը, տարբեր ծրագրերի և նախագծերի իրականացումը, անհրաժեշտ եմ համարում 2014 թվականի հոկտեմբերի 29-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի և Հորդանանի Հաշիմյան թագավորության Ամման քաղաքի միջև քույր քաղաքների» համաձայնագրի հաստատումը Երևան քաղաքի ավագանու կողմից:

Հաշվի առնելով տնտեսական, հումանիտար և մշակութային համագործակցության ընդլայնման հարցում փոխադարձ համաձայնությունը, վերոհիշյալ համաձայնագրով նախատեսվում է, որպեսզի Երևանի քաղաքապետարանը /Հայաստանի Հանրապետություն/ և Ամմանի քաղաքապետարանը /Հորդանանի Հաշիմյան թագավորության/ համագործակցեն հետևյալ ուղղություններով.

1. առևտրա-տնտեսական ոլորտ
2. կրթության ոլորտ
3. մշակույթի ոլորտ
4. զբոսաշրջության ոլորտ
5. երիտասարդական քաղաքականության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտ
6. սոցիալական ապահովության ոլորտ

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետը՝ Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՇԻՄՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄՄԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ՔՈՒՅՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի և Հորդանանի Հաշիմյան թագավորության Ամման քաղաքի միջև քույր քաղաքների» համաձայնագրի հաստատման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՀՈՐԴԱՆԱՆԻ ՀԱՇԻՄՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՄՄԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԻՋԵՎ ՔՈՒՅՐ ՔԱՂԱՔՆԵՐԻ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի և Հորդանանի Հաշիմյան թագավորության Ամման քաղաքի միջև քույր քաղաքների» համաձայնագրի հաստատման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2014 թվականի բյուջեում եկամուտների և ծախսերի փոփոխություն չի առաջանա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ոչ պաշտոնական թարգմանություն

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2014թ. նոյեմբերի
N -Ա որոշման

Քույր քաղաքների ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի և

Հորդանանի Հաշիմյան Թագավորության ԱՄՄԱՆ քաղաքի

միջև

Նկատի ունենալով Հորդանանի Հաշիմյան Թագավորության Ամման քաղաքի և Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի միջև գոյություն ունեցող փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ընդհանուր կապերը,

Երևանի քաղաքապետարանը, ներկայացված քաղաքապետ Տարոն Մարգարյանի կողմից և Ամմանի քաղաքապետարանը, ներկայացված քաղաքապետ Աքել Բիլթաջիի կողմից, այսուհետև՝ Կողմեր,

Ձգտելով զարգացնել այս փոխադարձ հետաքրքրությունները և ուժեղացնել ու խորացնել բարեկամությունը նշված երկու քաղաքների միջև, մասնավորապես տնտեսական և մշակութային կապերի հաստատման առումով,

- Հաստատելով համագործակցության հիմքը և հավասարությունն ու փոխադարձ հետաքրքրությունը երկու կողմերի՝ ՀՀ և Հորդանանի Հաշիմյան Թագավորության օրենսդրությունների միջև,
- Առաջնորդվելով երկու երկրների միջև բարեկամական կապերով,
- Ցանկություն ունենալով զարգացնել Երևան և Ամման քաղաքների միջև համագործակցությունը մշակութային և սոցիալական ոլորտներում,
- Համոզված լինելով, որ երկու քաղաքապետարանների միջև համագործակցությունը հետագայում կնպաստի քաղաքացիների և իրենց երկրների միջև բարեկամական կապերի զարգացմանը,
- Հավատալով, որ իրենց քաղաքները գլխավոր դերակատարում ունեն միջազգային հարաբերությունների բնագավառում որոշումներ կայացնելու գործընթացում,

Համաձայնեցին երկու քաղաքներին քույր քաղաքներ հռչակելու մասին և պայմանավորվեցին հետևյալի մասին.

<u>Հոդված 1</u>

Երկու կողմերը կջանան զարգացնել հետագա բարեկամական կապը Ամմանի և Երևանի բնակիչներին ներկայումս հետաքրքրող բոլոր ոլորտներում փոխշահավետ համագործակցությանն աջակցելու նպատակով՝ հաշվի առնելով տեղեկատվության և հաղորդակցության տեխնոգիայի աճող ազդեցությունը հասարակությունների վրա:

<u>Հոդված 2</u>

Կողմերը կջանան փոխանակել տեղեկատվությունը և լավագույն փորձը քաղաքային պլանավորման, հանրային կառավարման, հանրային աշխատանքների և ենթակառուցվածքների, շարժունակության և հասարակական տրանսպորտի, շրջակա միջավայրի պահպանության և կառավարման, ճարտարապետական ժառանգության վերականգնման և մշակութային գործունեության, տուրիզմի, երիտասարդության և սպորտի, սոցիալական ապահովության, ԱՏՀ համակարգերի և փոխադարձ հետաքրքրություն նրկայացնող այլ ոլորտներում:

Հոդված 3

Կողմերը կխթանեն և կզարգացնեն համագործակցությունը փոխադարձ շահերի համար կազմված և համաձայնեցված ավելի հատուկ ծրագրերի հիման վրա:

Հոդված 4

Ամմանը և Երևանը կնպաստեն սույն Համաձայնագրի պայմանների իրականացման հետ կապված երկու քաղաքների պատվիրակությունների հաճախակի փոխայցելություններին: Նշված փոխանակումները տեղի կունենան լայն և մշտական հիմունքներով, երկու քաղաքների բնակիչների ակտիվ մասնակցությամբ՝ իրենց մասնագիտական և այլ կազմակերպությունների և հաստատությունների միջոցով:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի հիման վրա երկու կողմերը կկնքեն համագործակցության ծրագիր և կնշանակեն երկու քաղաքների ներկայացուցիչներից բաղկացած Ղեկավարող հանձնաժողով՝ նշված Համագործակցության ծրագրի իրականացման միակ առաջադրանքով:

Հոդված 6

Սույն Համաձայնագիրն ուժի կմտնի այն պահից, երբ Երևանի քաղաքապետարանը Ամմանի քաղաքապետարանին գրավոր կծանուցի Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ՀՀ օրենսդրությամբ պահանջվող ընթացակարգերի կատարման մասին, և կգործի այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկը նախապես վեց ամիս առաջ գրավոր չի տեղեկացրել մյուս Կողմին Համաձայնագրի կատարումը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Ամման քաղաքում 2014թ. հոկտեմբերի 29-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Երևանի քաղաքապետարանի անունից	**Ամմանի քաղաքապետարանի անունից**
Տարոն Մարգարյան **Երևանի քաղաքապետ** **Հայաստանի Հանրապետություն**	**Աքել Բիլթաջի** **Ամմանի քաղաքապետ** **Հորդանանի Հաշիմյան** **Թագավորություն**